ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ԿՈԴ
050.0167 Ա. 30.09.22

30 սեպտեմբերի 2022 թվականի թիվ 167 Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «թ» կետերով և 31-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի տեղակալ **Ներսես Երիցյան**
2022 թ. սեպտեմբերի 30
Երևան

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 167 Ա որոշմամբ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ[1]

1. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կատարման գործընթացը[2]

Համաշխարհային և Հայաստանի տնտեսության 2022 թվականի զարգացումներն ընթացել են ռուս-ուկրաինական հակամարտության, Ռուսաստանի տնտեսության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների և դրանցից ածանցվող զգալի անորոշությունների ազդեցության պայմաններում: Այն արտահայտվել է համաշխարհային տնտեսությունում, այդ թվում՝ ՀՀ հիմնական գործընկեր երկրներում, մարտ ամսից սկսած տնտեսական աճի տեմպերի զգալի դանդաղմամբ, ինչպես նաև արժեշղթաների խաթարումների հետևանքով էներգակիրների և պարենային ապրանքների միջազգային շուկաներում արձանագրված անհամեմատ բարձր գնաճով:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա ապրիլից՝ դեպի Հայաստան միջազգային զբոսաշրջության և աշխատուժի ու կապիտալի ներհոսքի ավելացման արդյունքում, տնտեսական ակտիվության աճի տեմպերը կտրուկ արագացել են, հատկապես՝ ծառայությունների և առևտրի ոլորտներում: Նշվածի արդյունքում, հունվար-հուլիսին գրանցվել է տնտեսական ակտիվության 13.1% աճ՝ զգալի գերազանցելով բյուջեի ծրագրով նախանշված ցուցանիշները: Գնահատվում է, որ տնտեսական աճի բարձր մակարդակը պայմանավորող արտաքին գործոնների շարունակական պահպանման պարագայում, տնտեսական ակտիվության և համախառն պահանջարկի՝ ԿԲ սպասումներից բարձր աճի միտումները կշարունակվեն նաև առաջիկա եռամսյակներում, և տարվա արդյունքում ՀՀ տնտեսական աճը, ըստ Ֆինանսների նախարարության գնահատականների, կկազմի շուրջ 11 տոկոս:

2022 թվականի տնտեսական աճին ամենամեծ նպաստումն ունեցել է ծառայությունների ճյուղը, որը հիմնականում կրել է դեպի Հայաստան միջազգային այցելուների և ֆինանսական մեծածավալ ներհոսքի ազդեցությունը: Տնտեսության մյուս ճյուղերում ևս, բացառությամբ գյուղատնտեսության, արձանագրվում է թողարկման ծավալների զգալի աճ: Սա ուղեկցվում է նաև արտահանելի ոլորտում ներուժի ավելացմամբ, սակայն տնտեսական աճի հիմնական շարժիչը շարունակում

---

[1] **ՀՀ կենտրոնական բանկը պետական բյուջեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ եզրակացության կազմման աշխատանքներում առաջնորդվում է բյուջեի ծրագրի՝ միջնաժամկետ պարտքի կայունության ապահովման, հարկաբյուջետային քաղաքականության պարբերաշրջանային ուղղվածության և դիրքի, երկարաժամկետ աճին նպաստելու և այլ սկզբունքների ներքո գնահատականների ներկայացմամբ:**

[2] Սույն փաստաթղթում ներկայացված թվային տվյալները և գնահատականները վերցված են «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծից:

են մնալ ուժեղ արտաքին պահանջարկի գործոնները: Ընդ որում, արտաքին պահանջարկի գործոնների պահպանման հետ կապված անորոշությունը ռիսկեր է պարունակում տնտեսական աճի կայուն հիմքերի ձևավորման և տնտեսական ներուժի ավելացման համար: Նման իրավիճակում, 2022 թվականի արտաքին հատվածի զարգացումները ձևավորվել են տարածաշրջանի աշխարհաքաղաքական ու տնտեսական զարգացումների և Հայաստանի տնտեսության ակտիվության աճի միտումների ներքո՝ արտահայտվելով հատկապես ծառայությունների արտահանման և ընդհանուր ներմուծման գծով զգալի աճերի ձևավորմամբ: Արդյունքում, տնտեսական ակտիվության և ներքին պահանջարկի աստիճանական աճի պայմաններում, ակնկալվում է, որ, ըստ ֆինանսների նախարարության գնահատականի, 2022 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ բացասական հաշվեկշիռը որոշակի կխորանա:

Շարունակելով պահպանել պարտքի բեռի կայունացման սկզբունքը, 2022 թվականին ևս, տնտեսության արագ աճի պայմաններում, հարկաբյուջետային քաղաքականության ընթացքն ուղեկցվել է բյուջեի ծրագրով նախանշված սահուն կոնսոլիդացիայի ճանապարհով հակացիկլիկ քաղաքականության իրականացմամբ: Ընդ որում, տնտեսական ակտիվության զգալի բարձր աճի պայմաններում, հարկերի հավաքագրումը թեև գերազանցել է ծրագրված ցուցանիշներին, սակայն հարկեր/ՀՆԱ-ն իր աճի տեմպով որոշակի զիջել է և՛ 2022 թվականի, և՛ միջնաժամկետ հատվածի համար նախատեսված ցուցանիշներին: **Արդյունքում, սպասվում է, որ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2022 թվականին 0.4 տոկոսային կետ աճ կապահովի՝ տարվա համար ծրագրված 0.9 տոկոսային կետի դիմաց և կկազմի ՀՆԱ-ի 23.2%-ը:** Այսպիսով, գնահատվում է, որ 2022 թվականին համախառն պահանջարկի վրա հարկերը կունենան փոքր զսպող ազդեցություն՝ չնայած արտաքին մեծ պահանջարկի ազդեցության պայմաններում հակացիկլիկ զգալի դիրքի անհրաժեշտությանը:

Շարունակելով երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված պետական ծախսերի, այդ թվում կապիտալ և սոցիալական ուղղվածության ծախսերի իրականացումը, 2022 թվականին պետական բյուջեի ծախսերի գծով կարձանագրվի աճի բարձր մակարդակ: Ինչպես նախորդ տարիներին, 2022 թվականին ևս, ծախսերի կատարումն ուղեկցվել է ծրագրված մակարդակների վերանայումներով և ճշտված ծրագրի նկատմամբ զգալի թերակատարումներով: Թերակատարվել են և՛ ընթացիկ և՛ կապիտալ ծախսերը (մեծամասամբ՝ արտաքին աջակցությամբ իրականացվող կապիտալ ծախսերի հաշվին): Ուշագրավ է, որ կապիտալ ծախսերի կատարման գործընթացում պահպանվել է նախորդ տարիների վարքագիծը, այն է՝ կապիտալ ծախսերի աճի արձանագրմանը զուգահեռ, տարեկան ծրագրվածի նկատմամբ զգալի թերակատարումների ձևավորում: Այսպիսով, հաշվի առնելով ծախսերի ակնկալվող կատարողականը և դրա նկատմամբ ՀՆԱ աճի առաջանցիկ մակարդակի ձևավորումը, տարվա արդյունքում ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը կնվազի 1.6 տոկոսային կետով (կկազմի՝ 27.1%): Նշվածի արդյունքում, 2022 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսերը համախառն պահանջարկի վրա կունենան զսպող ազդեցություն:

2022 թվականին, տնտեսական ակտիվության սպասվածի համեմատ ավելի բարձր աճի և հարկերի ու ծախսերի վերը նշված համամասնությունների ձևավորման պայմաններում, բյուջեի պակասուրդը ՀՆԱ-ում նվազել է: Գնահատվում է, որ 2022 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը նախորդ տարվա համեմատ կնվազի և կկազմի 204.2 մլրդ դրամ՝ զգալիորեն զիջելով նաև տարեկան ծրագրված ցուցանիշին: Արդյունքում, ընդհանուր առմամբ հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կունենա զսպող ազդեցություն՝ դրսևորելով հակացիկլիկ քաղաքականությանը բնորոշ վարքագիծ:

Այսպիսով, թեև ձևավորված մակրոմիջավայրում կարևորվում է զսպող հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը, սակայն կապիտալ ծախսերի թերակատարումը բացասական ազդակ է պարունակում տնտեսության ներուժի կայուն ավելացման և վերջինիս նպատակադրված մակարդակի ապահովման տեսանկյունից: Այս համատեքստում կարևոր է դիտարկել հարկային քաղաքականության ներուժի գործարկման, այդ թվում՝ համապատասխան հատվածային և թիրախային քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը:

2022 թվականին, տնտեսական բարձր ակտիվության, հարկաբյուջետային զսպող քաղաքականության իրականացման, ինչպես նաև դրամի արժևորման արդյունքում դիտարկվել է պետական պարտքի՝ հարկաբյուջետային կանոններին համահունչ էական կրճատում: Նշվածի արդյունքում, գնահատվում է, որ ՀՀ պետական պարտքը ՀՆԱ-ում կնվազի 9.6 տոկոսային կետով և կձևավորվի ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. ծրագրով նախատեսված ցուցանիշից զգալի ցածր՝ 50.7% մակարդակում: Ընդ որում, ՀՆԱ-ում պետական պարտքի նվազման մեծ մասը բաժին է ընկել արտաքին պարտքին, որին նպաստել է նաև դրամի արժևորումը: Այսպես, ըստ ՀՀ ԿԲ գնահատականների, 2022 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ ներգրավված արտարժութային պարտքի նվազման շուրջ 15 տոկոսը պայմանավորված է դրամի փոխարժեքի արժևորմամբ: Հարկ է նշել, որ ներկա տնտեսական իրավիճակում պարտքի բեռի նվազող հետագծի պահպանումը կարևորվում է պարտքի կայունության ապահովման, ռիսկերի նվազեցման և տնտեսական աճի երկարաժամկետ հիմքերի ստեղծման տեսանկյունից:

2022 թվականին շարունակվել է բարձր գնաճային միջավայրի ձևավորումը, որը պայմանավորված էր արտաքին հատվածից փոխանցված գնաճով, ինչպես նաև համախառն պահանջարկի՝ սպասվածից բարձր աճի արձանագրմամբ: Նշված զարգացումների արդյունքում գնաճը պահպանվել է նպատակային ցուցանիշից բարձր մակարդակում: Առաջնորդվելով գների կայունության նպատակի ապահովման սկզբունքով՝ ստեղծված իրավիճակում ԿԲ-ն հունվար-օգոստոս ժամանակահատվածում շարունակել է վարել դրամավարկային պայմանները խստացնելու քաղաքականություն՝ սեպտեմբերի դրությամբ բարձրացնելով քաղաքականության տոկոսադրույքը ընդհանուր առմամբ 2.0 տոկոսային կետով:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Հավատարիմ մնալով տնտեսական ներուժի ավելացմանն ուղղված ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի նպատակային թիրախների ապահովման սկզբունքին, ինչպես նաև հաշվի առնելով 2022 թվականի տնտեսական բարենպաստ զարգացումներով ձևավորված նախապայմանները՝ 2023 թվականի համար նախանշվել է տնտեսական աճի 7 տոկոս մակարդակ: Տնտեսական աճի նախանշված ներուժից բարձր մակարդակի հիմքում ընկած է արտադրողականության և մրցունակության աճի ապահովման համար առանցքային ներդրումների, այդ թվում՝ պետական ներդրումների մասնաբաժնի էական մեծացումը և արտահանման աճի կայուն հիմքերի ձևավորումը:

Համախառն առաջարկի տեսանկյունից, տնտեսական աճի նախանշված բարձր մակարդակը կդրսևորվի տնտեսության բոլոր ճյուղերում, սակայն 2022 թվականի միտումներին համահունչ ավելի մեծ չափով նպաստում կունենա ծառայությունների ճյուղը: Այնուամենայնիվ, կայուն բարձր տնտեսական աճի ապահովումը զգալիորեն կախված կլինի ՀՀ կառավարության կողմից ենթակառուցվածքներում սահմանված ժամկետներում խոշոր պետական ներդրումների ծրագրված համամասնությունների ապահովումից, ինչպես նաև տնտեսական աճը պայմանավորող արտաքին գործոնների կայուն զարգացման միտումներից: Բացի դրանից, հաշվի առնելով տնտեսական աճի նախանշված՝ ներուժից բարձր մակարդակի ապահովման համար մասնավոր ներդրումների էական նպաստումը, կարևոր ենք համարում ներդրումների խրախուսման և արտահանման խթանման ուղղությամբ նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետներում և ամբողջական իրականացումը:

2023 թվականին ևս հարկաբյուջետային քաղաքականությունը կշարունակի սահուն կոնսոլիդացիայի իրականացումը՝ նպաստելով պարտքի բեռի նվազեցմանը, ինչպես նաև այն համադրելով տնտեսական աճի խթանմանն ուղղված պետական ներդրումների էական մեծացման քաղաքականությամբ:

Նախանշված տնտեսական աճի, ինչպես նաև հարկային վարչարարության բարելավման արդյունքում 2023 թվականի համար նախանշվել է հարկեր/ՀՆԱ ցուցանիշի էական՝ 0.5 տոկոսային կետ աճ, որի արդյունքում հարկերը կկազմեն ՀՆԱ-ի 23.7 տոկոսը: Ընդ որում, վերջինս 0.3 տոկոսային կետով ցածր է միջնաժամկետի համար նախատեսված համամասնությունից: **Արդյունքում, 2023 թվականի ՀՀ պետական բյուջեի եկամուտները համախառն պահանջարկի վրա կունենան փոքր զսպող ազդեցություն:** Սակայն, հաշվի առնելով ընթացիկ տարում դիտարկվող՝ հատկապես ծառայությունների ոլորտում պահանջարկի էական աճը, ձևավորված և սպասվող մակրոմիջավայրի զարգացումները, ինչպես նաև միջնաժամկետ ծրագրի համեմատ 2022 թվականի հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավման համեմատաբար համեստ ցուցանիշները՝ կարևոր ենք համարում 2023 թվականին հարկերի հավաքագրումը բարելավող լծակների ուժեղացման և հարկերի ներուժային մակարդակի ապահովմանն ուղղված հարկային բարեփոխումների

իրականացումը: Այն հնարավորություն կտա ՀՆԱ-ում հարկային եկամուտների ավելի բարձր աճ ապահովել և ամբողջական պահանջարկի զգալի զսպման միջոցով նպաստել մակրոտնտեսական կայունության ապահովմանը: Իսկ մյուս կողմից, հնարավորություն կընձեռի ավելի մեծ ռեսուրսներ հատկացնել երկարաժամկետ կայուն տնտեսական աճը խթանող կապիտալ ծախսերի իրականացմանը՝ միաժամանակ նպաստելով մակրոտնտեսական ճեղքերի անհրաժեշտ ճշգրտմանը:

2023 թվականին, տնտեսական աճին նպաստելու և ծախսերի կառուցվածքի բարելավմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության նպատակադրումների ներքո, նախատեսվում է էականորեն մեծացնել կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում՝ հասցնելով 5.9%-ի և նվազեցնել ընթացիկ ծախսերը՝ հասցնելով 21.9%-ի: Արդյունքում, ՀՀ պետական բյուջեի ծախսերը ամբողջական պահանջարկի վրա կունենան ընդլայնող ազդեցություն: Այստեղ հարկ ենք համարում ընդգծել այն հանգամանքը, որ ամբողջական պահանջարկի մեծ աճով ուղեկցվող պետական ծախսերի ընդլայնող քաղաքականությունը կարող է որոշակի ռիսկեր առաջացնել մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից: Ուստի այս տեսանկյունից, անհրաժեշտ ուշադրության է արժանի ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկաբյուջետային ծախսային կանոնների պահպանումը և դրան համահունչ ընթացիկ առաջնային ծախսերի հնարավորինս ավելի սահմանափակման ու կապիտալ ծախսերի նպատակադրման՝ որդեգրված քաղաքականության արդյունավետ իրականացումը:

Այսպիսով, կապիտալ ծախսերի ավելացման հաշվին պետական բյուջեի պակասուրդը կավելանա՝ կազմելով ՀՆԱ-ի 3.1%-ը, իսկ հարկաբյուջետային քաղաքականությունը կլինի չեզոք՝ նպաստելով տնտեսական ներուժի ամրապնդման համար հիմքերի ձևավորմանը և պարտքի բեռի փոքր չափով նվազմանը: Արդյունքում, կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կնվազի ընդամենը 1 տոկոսային կետով և կկազմի 49.7%՝ միջինժամկետ ծրագրով նախատեսված ցուցանիշից ցածր: Հարկ է նշել, որ պետական բյուջեի պակասուրդի և հատկապես կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար շարունակվելու է արտաքին աղբյուրներից միջոցների ներգրավումը, ինչպես նաև ազգային արժույթով պարտքի և ներքին պարտքի աստիճանական ավելացումը: Նշենք, որ պարտքի կայունության տեսանկյունից կարևորվում է ներքին պարտքի ավելացման հաշվին պակասուրդի ֆինանասավորումը:

Այդուհանդերձ, 2023 թվականին, և նախորդ տարվանից շարունակվող ամբողջական պահանջարկի զգալի աճի պայմաններում, մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից, կարևոր ենք համարում շեշտադրել զգալի հակացիկլիկ հարկաբյուջետային քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը: Այս տեսանկյունից ուշագրավ է այն, որ 2023 թվականի պետական բյուջեի ծրագրի իրականացումը, որն ընդհանուր առմամբ արտացոլում է միջնաժամկետ ծրագրերի նկատմամբ հարկերի ՀՆԱ-ում ավելի դանդաղ աճ և կապիտալ ծախսերի աճի ու պարտքի կրճատման տեմպերի արագացում, զգալիորեն կախված կլինի նաև 2022 թվականի բարձր տնտեսական ակտիվության՝ աճի կայուն մակարդակի վերածելու կարողությունից: **Այսպիսով, 2023 թվականին ՀՀ կառավարության պարտքի կրճատման շարունակական իրականացումը էապես**

կախված կլինի տնտեսական բարձր աճը պայմանավորող արտաքին գործոնների զարգացումներից: Այս պարագայում, տեղին է կրկին անդրադառնալ և շեշտադրել միջնաժամկետ հատվածում պարտքի ավելի մեծ չափով կրճատման և կայունացման կարևորությունը՝ միաժամանակ շեշտադրելով սպասվածից մեծ չափով պարտքի բեռի նվազման դեպքում ՀՀ կառավարության կողմից սոցիալական ծախսերի կատարման նոր պարտավորությունների ստանձնման հնարավոր ռիսկերը և դրանց բացառման անհրաժեշտությունը:

Ամփոփելով՝ գնահատվում է, որ 2023 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծով նախանշված չեզոք հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է որոշակի ռիսկեր առաջացնել մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից, ինչը ճշգրտելու և հավասարակշռություն պահպանելու համար անհրաժեշտ կլինի իրականացնել հարկաբյուջետային զգալի զսպող քաղաքականություն: Միևնույն ժամանակ, շեշտադրելով բյուջեի ծախսերի բարելավման և կապիտալ ծախսերի մասնաբաժնի մեծացմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հարկերի հավաքագրման լծակների ուժեղացմանն ուղղված հարկային բարեփոխումները՝ ծրագրով նախատեսված միջոցառումները անհրաժեշտ նախապայման կստեղծեն առաջանցիկ պահանջարկի աստիճանական ճշգրտման և ՀՆԱ ներուժային մակարդակի բարձրացման ու երկարաժամկետ կայուն աճի ապահովման համար: